Եղիշե Չարենց

Դանթեական առասպել

Մենք ճամփա ընկանք առավոտ ծեգին՝
Կապույտ երկնքի խորությամբ արբած:
Թարմ, թեթև էր մեր ճամփորդի հոգին՝
Ուրախ էինք մենք և մեր սիրտը բաց:
Կանչում էր, կանչում ճամփան անմեկին
Ոլորապտույտ մեր առաջ փռված:

Եվ վերջին անգամ նայեցինք մենք ետ,
Ուր ոչինչ չկար մեզ համար դյութիչ.
Անցյալը կորել, ցնդել էր անհետ,
Որպես երազում արձակած մի ճիչ:
Ո՛չ մի տխրություն չէր ճախրում մեզ հետ՝
Կախարդել էր մեզ առավոտը ջինջ:

Պար էինք խաղում ու երգեր ասում,
Ջենքերի փայլով հրճվում էինք մենք:
Կարծես մանկական կապույտ երազում՝
Ամեն ինչ այնպես ժպտում էր աննենգ:
Ո՛չ հրաժեշտի անորոշ հուզում,
Ո՛չ էլ մեռնելու կասկածանք կար նենգ:

Անսահման դաշտն էր փռված մեր առաջ:
Ոսկի հասկերով ողջունում էր մեզ

Աշխարհի հեռուն՝ բա՛ց, լայնատարա՛ծ,
Արևի շնչով լվացված կարծես:
Իսկ ճամփան, անծայր իրանը փռած,
Թավալվում էր մի հսկա օձի պես:

Թեթև քայլերով ու սրտով թեթև
Քայլում էինք մենք կայտառ ու ջահել:
Մեր հոգին ուներ թռիչքներ ու թև՝
Ո՞վ էր մեզ արդյոք այդպես հմայել…
Նայում էին մեզ լեռները պարթև՝
Կոչո՛ւմն է նրանց հավիտյա՛ն նայել:

Ուշ իրիկուն էր, երբ մի գյուղ մտանք:
Վրաններն արդեն զարկըված էին,
Երբ նույնպես ուրախ, անհոգ, անվտանգ
Բոլորեց իսկույն մեր շուրջպարը հին.
Ջնգացին նորից հազար երգ ու վանկ
Եվ վերջին անգամ պղպջաց գինին:

Լուսնյակը արդեն բարձրացել էր վեր
Եվ շուրջը փռել արծաթե մշուշ,
Երբ հոգնած մտանք վրանները մեր,
Խոտերի վրա պառկեցինք անուժ.
Է՜, բարի գիշեր, անգի՛ն ընկերներ,
Ու խոր քուն մտանք, քնեցինք անուշ: